ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-20-10/10-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 06 .03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն.Յոլչյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դառես» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն.Քոսակյանի, ով գործում է «Դառես» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **13.12.2019թ.** կնքված N **ԳՀԾՁԲ-20-10/10-1** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ծառայությունը ներառված է ՀՀ կառավարության 2020թ.-ի պետական բյուջեով հաստատված պետության կարիքների համար գնումների պլանում 17.02.2020թ. Ծանուցում N 5-ՊՆ փոփոխությունների և /կամ/ լրացումների մեջ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով **ոչ վտանգավոր աղբի և թափոնների հեռացման և ոչնչացման ծառայությունների (Կոյուղահորերի մաքրման ծառայություններ)** գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան **ոչ վտանգավոր աղբի և թափոնների հեռացման և ոչնչացման ծառայություններ (Կոյուղահորերի մաքրման ծառայություններ)** (այսուհետ՝ Ծառայություն)՝ Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում **է 21 502 800 (քսանմեկ միլիոն հինգ հարյուր երկու հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայնանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն.ՅՈԼՉՅԱՆ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Դառես» ՍՊԸ
ք.Երևան, Գայ... հարակից 36շ. 1բն.
«Ամերիա...
Հ/Հ 157...6110100
ՀՎՀՀ ...
Տնօր...

«ԴԱՌԵՍ» "DARES" "ДАРЕС" 02624964

Ն. ՔՈՍԱԿՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-10/10-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության									
Հ/հ	CPV	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Հաշվարկային առավելագույն քանակը	Միավորի պլանավորված գինը, ՀՀ դրամ	ընդհանուր **առավելագույն** գինը/ՀՀ դրամ	մատուցման **ժամկետը**	մատուցման Հասցեն /ՊՆ զորամասեր/
1	90511160/503	Ոչ վտանգավոր աղբի և թափոնների հեռացման և ոչնչացման ծառայություններ (Կոյուղահորերի մաքրման ծառայություններ)	Ոչ վտանգավոր աղբի և թափոնների հեռացման և ոչնչացման ծառայությունները իրենց մեջ ներառում են կեղտաջրերի բարձում և տեղափոխում հատուկ տրանսպորտային միջոցներով (ասենիզացիոն մեքենաներով)	Խ.Մ	4344	4950	21 502 800	Ծառայությունը կկատարվի ՊՆ ԿՇ և ՁԲ վարչության հայտերի հիման վրա՝ 2020թ.-ի 1-4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.:	Բերդ Փամբակ Երևան Բալահովիտ Երևան Չորանքարա Մերձավան Մերձավան Արարատ Մուղնի Խնածախ Երիցվանք Սդխի գյուղ Թեժ Լեռ Եղվարդ Սարդարապատ Երևան Աշտարակ Սիսիան Զովունի Յանշակ Սոտք Կարճաղբյուր Վանաձոր Վանաձոր Մեհրաբ Նոյեմբերյան Ճամբարակ Մայիսյան Կամուրջ

1. **Ծառայության առավելագույն գինը կազմում է 21 502 800 ՀՀ դրամ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն.ՅՈԼՉԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ
«DARES» LLC
«ДАРЕС»
02624964

Ն. ՔՈՍԱԿՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀՇՁԲ-20-10/10-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայությունների											
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝								
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25-ը
1	90511160/503	Ոչ վտանգավոր աղբի և թափոնների հեռացման և ոչնչացման ծառայություններ (Կոյուղահորերի մաքրման ծառայություններ)	5 376 700	5 376 700	5 376 700	10 751 400	10 751 400	10 751 400	21 502 800	21 502 800	21 502 800

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն.ՅՈԼՉԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դառես» ՍՊԸ
Տնօրեն

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ